

Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share – copy and redistribute the material in any medium or format

Adapt – remix, transform, and build upon the material

b855 6.

1013-9

Ա. ԿՐՈՒՊՆԱՅԱ

669



Պ. Ս Պ Ա Ս

ԵՐԵՎԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՎԵՐԵՎԱՆ-1927

Գրառեալ. № 206 ը.

Հրատ. 556.—Տիրաժ 5000.


Պետհրատի 2-րդ տպա-  
րան Յեղիշևում

Պատվեր 571.

ՊԱՏՐԱՎ-Ս

A H 9599

~~ԽԵՂԱՔԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ~~





---



Յուրաքանչյուր պիոներ «Պատրաստ» կոչին պատասխանում է «Միշտ պատրաստ», բայց շատերը չգիտեն, թե ինչպես ե առաջացել այդ կոչն ու պատասխանը:

«Պատրաստ». այդ Լենինի կոչն եր ուղղած կուսակցության անդամներին, բանվոր դասակարգի գործի համար պայքարողներին:

22 տարի առաջ, 1902 թվին Ռուսաստանի բանվոր դասակարգը գեռ չուներ իր կուսակցությունը:

---

---

---

Ճիշտ է, 1898 թվին տեղի ունեցած սոցիալ-դեմոկրատների առաջին համագումարը։ Այնտեղ բանվորական կազմակերպությունների ներկայացուցիչներից միայն միքանի մարդ կար։ Համագումարը վորոշեց կազմակերպել Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցություն, նույնիսկ ընտրեց կենտրոնական կոմիտե։

Բայց վոստիկանությունը համագումարի հետքը գտավ, բանտարկեց նրա համարյա բոլոր մասնակիցներին և գործը բայթայվեց, մնաց միայն անունը։

---

---

Առանձին մեծ քաղաքներում  
գոյություն ունելին սոցիալ-դե-  
մոկրատական փոքրաթիվ կազմա-  
կերպություններ, վորոնք աշխա-  
տանք ելին կատարում բանվորնե-  
րի մեջ, բայց նրանք թույլ ելին և  
համարյա կապված չելին իրար  
հետ։ Մի կազմակերպություն աշ-  
խատում եր մի ձեռվ, մյուսը մի  
այլ ձեռվ։ Այդ կազմակերպու-  
թյուններն ամենից շատ ոգնում  
ելին բանվորներին գործադուլներ  
կազմակերպելու գործում։ Մի քա-  
նի սոցիալ-դեմոկրատներ կարծում  
ելին, թե կուսակցության դերը  
միայն այն է, վոր ողնի բանվոր-

Ներին կովելու իրենց տերերի դեմ,  
բայց վաղաժամ ե խոսել այն մա-  
սին, վոր հարկավոր ե տապալել  
ցարին և ամբողջ կյանքն այլ կերպ  
կառուցել։ Մյուսներն ասում ենին  
թե անհրաժեշտ չե նույնիսկ կու-  
սակցության գոյությունը։ Գլխա-  
վորն այն ե, վոր բանվոր դասա-  
կարգն ապստամբվի ցարերի դեմ,  
բայց մոռանում ենին, վոր դրա  
համար հարկավոր ե կազմա-  
կերպվել։

Ըսկ. Լենինն այն ժամանակ գր-  
րեց «Ի՞նչ անել» գրքունկը։ Այդ  
գրքունկում նա բացարում եր,  
վոր պետք ե աշխատել բանվոր-

ներին վորքան կարելի յէ գիտա-  
կից դաշնել, խոսում եր այն մա-  
սին, թէ վորքան հսկայական նշա-  
նակություն ունի կազմակերպու-  
թյունը։ Նա զրում եր, վոր հար-  
կավոր ե, վորպեսզի կուսակցու-  
թյունը, բանվոր դասակարգի ա-  
սածավոր ջոկատը, վորքան կարե-  
լի յէ լավ հասկանա, թէ ինչ ե  
կատարվում իր շուրջը, վորպեսզի  
պարզ տեսնի իր ուղին, լավ հաս-  
կանա, թէ ամեն մի ըռպե ինչ  
պիտի անել։ Յեվ հարկավոր ե,  
վորպեսզի կուսակցությունը ներ-  
կայացնի մի միաբան կազմակեր-  
պություն, վոր անհրաժեշտ դեպ-

քում կարողանա հանդես գալ վորպես մի մարդ։ Այն ժամանակ միայն կարելի յէ հաղթել և ցարիզմին, և՛ բուրժուազիային։ Գիտակցականությունն ու կազմակերպվածությունը յերկնքից չեն ընկնում։ Հարկավոր ե անդադար սովորել շրջապատը հասկանալ, հարկավոր ե ամեն բանում սովորել կազմակերպված, միաբան գործել։  
«Մենք սկսուք ե միշտ, — զրում եր ընկ. Լենինը 1902թ. իր «Ի՞նչ անել» գրքույկում, — մեր առորյա աշխատանքը կատարենք և միշտ պատրաստ լինենք ամեն բանի համար» (Աշխ. Ժող. հատոր V Եջ 264):

Պիտի պատրաստ լինենք աշխատանք կատարելու վոստիկանությունից գաղտնի, թոռոցիկներ տպագրելու գաղտնի տպարաններում, ոզտվելու հարմար առիթից, վորպեսզի աջակցենք բանվորներին գիտակից գառնան և կազմակերպվեն, պիտի պատրաստ լինենք դրա համար բանտ նստել և տաժանակիր աշխատանքի գնալնույնիսկ պիտի պատրաստ լինենք յերբ հարմար ժամանակը գա, զենքը ձեռքներիս ապստամբելու:

«Պատրաստ» — ասում եր ընկ. Լենինը կուսակցության անդամներին, և Լենինի կուսակցու-

թյունը, վոր այժմ կոչվում է համամիութենական կոմմունիստական կուսակցություն, չխռոսափեց վոչ մի ամենասկ, ամենաձանձրակի աշխատանքից ՅԵՎ, յԵՐԲ հեղափոխության հարմար ժամանակը յԵԿԱՎ, ԼԵՆԻՆՅԱՆ կուսակցությունը «պատրաստ եր» և տարավ ԵՐ յԵՄԵԼից բանվորներին ու զյուղացիներին:


Պատանի պիոներները դեռ չեն ծնվել, յԵՐԲ ԼԵՆԻՆԸ բանվորդասակարգի գործի համար պալքարողներին կոչ եր անում լինել պատրաստ, բայց պատանի պիոներներները հաստատ վորոշել են հա-

վատարիմ լինել Հենինի պատգամ-  
ների. Նրանք անդադար սովորում  
են, Նրանք անդադար կազմակերպ  
վում են, Նպատակ են դնում  
կազմակերպել բոլոր պատանինե-  
րին, դարձնել բոլորին դիտակից  
ու հմուտ. պատանի պիոներները  
ուզում են սովորել նոր կյանք  
կառուցելը, Նրանք ուզում են շա-  
րունակել Հենինի գործը:

### «ՊԱՏՐԱՍ»


### «ՄԻՇՏ ՊԱՏՐԱՍ»

Ա Յ Տ Ա Զ





ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0046837

[034]

A 2  
9522

ԳԻՒԸ 4 ԿՈՊԵԿ

